



ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

(հուղարկավորության ծեսեր ու սովորույթներ)

Ռ. Ա. ՆԱԶԱԳԵՏՅԱՆ

Արդի ազգագրական գիտության մեջ զնալով աճում է հետաքրքրությունը ընտանիքի, ընտանեկան կենցաղի, ծեսերի ու սովորույթների նկատմամբ, քանի որ դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն բացահայտելու մշակութային այդ երևույթի պատմական զարգացման փուլերն ու էությունը, այլև դրա կենցաղավարման յուրատիպ ձևերի անդրադարձմամբ ներթափանցելու ժողովրդի սոցիոնորմատիվ մշակույթի ամենաբազմազան ոլորտները, վեր հանելու էթնիկ ավանդույթի բազում յուրօրինակ գծեր: Անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել անցյալի էթնոմշակութային ժառանգությունը նաև այն առումով, որպեսզի այն ամեն դրականն ու բուն ժողովրդականը, ինչը դիմացել է ժամանակի քննությանը ու հասել մեզ, կարողանանք ի սպաս դնել այսօրվա խնդիրների կատարմանը:

Սասունցիների ընտանեկան կյանքում նահապետական ավանդույթների խիստ պահպանողականությամբ առանձնակի տեղ է գրավել մահվան և հուղարկավորության ծիսակարգը: Չնայած թաղման ու մեռելոցի սովորույթներն առավել չափով են ենթարկվել քրիստոնեական եկեղեցու արարողակարգի ազդեցությանը, այնուամենայնիվ դրանք պահպանել են ժողովրդի կենսակերպի ու մտածողության ամենահնամենի գծերը¹:

Մահվանը, հուղարկավորությանն ու մեռելոցին ուղեկցող ծեսերի ու սովորույթների համալիրը գործառական նպատակամղվածության առումով ներառել է ժողովրդական պատկերացումները ճակատագրի և մահվան, հոգու և դրա կայանի, ննջեցյալի և նրա հոգու վնասաբեր ազդեցության, ինչպես նաև՝ ննջեցյալի և նախնիների հոգիներին «կերակրելու», լայն առումով՝ նրանց պաշտամունքի վերաբերյալ²:

Մանր հիվանդությամբ տառապող մարդկանց Սասունում շրջապատել են մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ: Հարազատները, բարեկամներն ու հարեան-համայնակիցները շանացել են ամեն կերպ բավարարել անկողնային անհույս հիվանդի բոլոր ցանկությունները, որպեսզի մահվան պարագային

¹ Սույն հոդվածը հիմնականում շարադրված է հեղինակի կողմից ՀՍՍՀ Քալինի, Աշտարակի, Էջմիածնի, Մասիսի, Արարատի շրջաններում վերաբնակված սասունցիներից հավաքած գաղտային ազգագրական նյութերի հիման վրա, որոնք պահպնվում են ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ուսումնական կարիքներում (Գաշտային ազգագրական նյութեր, տեքստում այսուհետև՝ ԳԱՆ): Որոշ սովյալներ քաղել ենք Ե. Կարապետյանի (Սասուն, ազգագրական նյութեր, Երևան, 1963) և Վ. Պետոյանի (Սասնա ազգագրությունը, Երևան, 1965) հրատարակած նյութերից:

² Հմմտ Զ. Խառատյան, Թաղման ծեսերի ֆունկցիոնալ-պաշտամունքային կառուցվածքը Հայերի մեջ (Երիտասարդ գիտնականների V կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Ե. 1982, էջ 32—33):

խղճատանքի կամ զղջալու բան շունենային: Նման հիվանդի վիճակի մասին սասունցիները գուշակութուններ են արել: Այսպես, եթե ծանր հիվանդը շոքեմուտ, ուրբթմուտ և կիրակմուտ օրերին ավելի չվատանար, ապա հույս են տածել, որ կփրկվի, այլապես անհուսալի է համարվել: Ըստ այդ հայեցողության, այդ օրերին տանը հիվանդների և նաև ծննդկանների նկատմամբ խնամատարություն են արել բարի հրեշտակները: Հիվանդի անհուսալի վախճանը սասունցիները գուշակել են նրա վարքագծով ու դիմագծերի փոփոխությամբ՝ տափնապալի հայացքով, շարունակ երդիկից ու դռնից դուրս նայելով, վերմակը վրայից շարտելով, եկող գնացողին հարց ու փորձ անելով: Մոտալուտ մահվան նշան է համարվել նաև ունագերի անբնական լայնացումը, շուրթերի գունազրկումն ու ձգվել-բարակելը: Մայրը, կինը, եղբայրն ու քույրը շոյել են հիվանդի ճակատն ու ձեռքերը, ձայն տվել, որ իրենց հետ խոսի (ԳԱՆ, տ. 9, էջ 157—158):

Ըստ սասունցիների հայեցողության, մահ բերողն աստծուց ուղարկված հոգեառ հրեշտակն է, որը իբր թե երևացել է ծանոթի կերպարանքով: Երբեմն մեռնողները զառանցելիս ասել են «Հրեշտակն եկել, ինձ կանչում է»: Հավատացել են, թե հոգեառը տուն է մտնում երդիկից, հիվանդի հոգին հանում քթանցքերից³, և, առնելով այն, երդիկից էլ հեռանում է⁴:

Հիվանդի օրհասական պահին թեև նրան շրջապատող հարազատները խոր վիշտ են ապրել, բայց հուզմունքը, լացն ու կոծը թաքցրել են, որպեսզի մահամերձը հոգեղարձ չլիներ, հոգեվարքը ձգձգվող ու տանջալի չդառնար: Առհասարակ, հավատացել են, որ երկարատև ու ծանր հոգեվարք ապրում են «մեղավոր» հոգու տեր մարդիկ: Այդ պահերին հրավիրված քահանան «հաղորդում» և մեղքերի թողություն է շնորհել մեռնողին:

Հոգևարք ապրողի մահը դյուրացնելու նպատակով նրան տնից դուրս են տարել և դեմքն ուղղել արևելք, որը հեթանոսական առումով նշանակել է ներկայացնել Արև աստծուն: Ոմանք էլ նրա վրա դրել են իր սիրած հագուստը, կամ էլ՝ պանդխտության մեջ գտնվող հարազատի լուսանկարը, շորը և այլն (ԳԱՆ, տ. 4, էջ 142—143):

Մարդու մեռած լինելն ստուգելու համար, երբ նա դադարել է շնչելուց, նայել են նրա ձեռքի եղունգին, թեթևակի սեղմել այն, ապա թողել: Եթե սեղմելու և թողնելու պահին եղունգի գույնը փոխվել է, ուրեմն արյունը գործում է և մեռած չի համարվել, իսկ եթե եղունգի գույնը չի փոխվել, հիվանդը մեռած է համարվել: Այդ պահին մոտեցել է մեկը, ուղղել մեռածի սառած ոտքերը, կախ ընկած ձեռքերը խաշել կրծքին, մեկ ձեռքով փակել սառած աչքերը, մյուս ձեռքով վարի ծնոտն ամուր սեղմել վերին ծնոտին⁵:

Շատ դեպքերում Երուսաղեմ այցելելիս այնտեղից «լուս-խունկ», «լուս-մոմ», «լուսակտավ» և «օրհնության գիր» (ԳԱՆ, տ. 14, էջ 9) բերելու սովորություն է եղել: Խունկն օգտագործվել է ննջեցյալի քթանցքերը, ականջներն ու բերանը խնկել և փակելու, կտավը՝ պատանքի, մոմը՝ վառած վիճակում ձեռքերի արանքում դնելու, իսկ «օրհնության գիրը» նշխարքի հետ ծոցը դնելու համար: Մահը վրա հասնելուց հետո պոռթկացել է լացն ու ողբը, աղմուկ-աղաղակը: Հերարձակ կանայք երբեմն վերնագգեստները շրջել ու «շրջոնք» են հագել: Որոշ վայրերում սուգն ու լացն ավելի հուզիչ դարձնելու համար «լալիք» (սգերգ) ասող կանանց են հրավիրել: Լալկան կանայք ննջեցյալի բա-

³ Պատահական չէ սասունցիների՝ «Հոգիս քթիցս դուրս եկավ» ասացվածքը, որ գործածվել է ծանր աշխատանքների ժամանակ:

⁴ Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 302:

⁵ Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 301, Ե. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 113:

րեմասնությունները նշելիս գովերգել են նրա հագուստ-կապուստը, զենք ու զրահը, ձին ու ձիավարությունը, այրի թողած կնոջն ու ողբացած զավակներին: Ի դեպ, ողբի, սուգ ու շիվանի աստիճանն էլ պայմանավորված է եղել հանգուցյալի «Քանկ մեռել» կամ «էժան մեռել» լինելուց⁶: Առանց լաց ու կոծի, արժանապատվությամբ է կատարվել այն մարդկանց թաղումը, ովքեր զոհվել են կովի դաշտում: Ինքնասպանություն գործած, անհաղորդ և հատկապես կայծակնահար եղած մարդկանց թաղումն անշուք է անցել⁷ (ԴԱՆ, տ. 4, էջ 132, տ. 9, էջ 158—159):

Հանգուցյալին լողացրել են գոլ ջրով, տան դռան մոտի անկյունում, կամի կամ տախտակի վրա: Տղամարդկանց լողացրել են տղամարդիկ, կանանց՝ կանայք: Ընտանիքում մահացածության նոր դեպքը կանխելու միտումով ննջեցյալին լողացնելիս կաթսայի ջրից ոչ մի կաթիլ չպետք է ավելանար: Կարողություն ունեցող մարդիկ իրենց ննջեցյալների համար դազաղ են պատրաստել, իսկ չբավորներն առանց դազաղի, լուկ պատանքով են թաղել: Վերջին դեպքում ննջեցյալի դին եկեղեցի կամ գերեզմանատուն են տեղափոխել հատուկ պատգարակով, որը ճաշ է կոչվել: Պատանքը ձևել և բամբակե հաստ թելով կարել են Բաղեշի սպիտակ թանձր կտավից: Պատանքող պառավներն այն շուրջակարով փաթաթել են ննջեցյալի իրանին այնպես, որ մարմինն ամբողջովին ծածկվի, իսկ մախրաասեղն էլ առանց թելից կտրելու վրան են թողել տանից մահվան նոր դեպք կանխելու և նոր պատանք չկարելու միտումով: Պատանքելուց առաջ խաչել են հանգուցյալի ձեռքերը և ոտքերի բութ մատները թելով կապել միմյանց, բերանին, տարիքով լինելու դեպքում՝ նաև սրտին, դրել են եռանկյունաձև ծալերով, քահանայի կողմից երեք տեղից արված անցքերով նույն կտավե կտորով փաթաթած նշխարը, որ վառչամակ էր կոչվում: Պատանքացու կտորից մի նեղ երիզ էլ կտրել և կապել են ննջեցյալի մեջքին, իսկ եթե պատանքացուից կտոր էր ավելացել, այն էլ փաթաթել են տան սյանը: Զանացել են որքան հնարավոր է շուտ՝ նույն օրը թաղել ննջեցյալին, իսկ հակառակ դեպքում մայրամուտից հետո մահացածին տարել են եկեղեցի, ուր մնացել է գիշերը և թաղել են հաջորդ օրը: Ննջեցյալին տնից դուրս հանելիս նաշը կամ դազաղը երեք անգամ տեղից կտրել և նույնքան անգամ էլ տան դռանն են խփել՝ տանից այլևս մեռել չլինելու միտումով (ԴԱՆ, տ. 9, էջ 159): Թաղմանը մասնակցել են հարազատ ու բարեկամ, համագյուղացի ու հարևան, իսկ ծիսակարգը կատարել է քահանան՝ տիրացուի ուղեկցությամբ:

Տղամարդ ննջեցյալի գերեզմանը փորվել է մինչև գերեզմանահատների գոտկատեղը, իսկ կանանցը՝ մինչև կուրծքը: Կին ննջեցյալի գերեզմանը ավելի խորն են արել, որը, ըստ ժողովրդական մտածողության, առնչվել է կին ննջեցյալին սատանայի հետ նույնացնելու և գերեզմանից նրա դուրս ելնելու ընդունակությունը կանխելու գաղափարի հետ: Այդ հանգամանքը թերևս ունեցել է նաև առողջապահական նկատառումներ:

Ուշագրավ է ննջեցյալի պատանքը գերեզմանում քարե արկղի մեջ թաղելու սովորույթը: Դեռ 1971 թ. Թալինի շրջանի Աշնակ գյուղում 90-ամյա Գրի-

⁶ Քանկ մեռել է համարվել՝ հարուստ և իշխանավոր մարդը, հոր ու մոր միակ զավակը, նոր նշանված, հարսանիքի օրը հանկարծամահ եղած փեսան կամ հարսը, նորապսակ ամուսիններից որևէ մեկը, անշափահաս երեխաներ ունեցող ծնողը, կովի կամ աշխատանքի վայրում անհայտ մարդկանց ձեռքով սպանվածը, արտակարգ ու անժամանակ դեպքերի պատճառով զոհված երչտասարդը և, վերջպես, դեռ աշխարհ չվայելած պատանին կամ երիտասարդը (տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն, էջ 112):

⁷ Կայծակնահարին անշուք ձևով են թաղել նաև կովկասյան այլ ժողովուրդներ (տե՛ս Ս. Ս. Салакая, Обрядовый фольклор абхазов.—Фольклор и этнография, Л., 1974, էջ 22—23):

գոր (Պճուկ) Համազասպի Կիրակոսյանից և 105-ամյա Միհրան Հարությունի Ղուկասյանից (Քոթո Միրոյից) մենք գրի ենք առել Սասունի տարբեր բնակավայրերում եղած թաղման այդ կարգի մասին: Նրանց հավաստմամբ, Սասունում XX դ. սկզբներին գերեզմանում հաստ սալերից քարարկղ են սարքել և ննջեցյալին մեջն իջեցնելուց ու քահանայի՝ թաղման արարողությունը կատարելուց հետո ծածկել են դարձյալ քարե սալերով: Այդ դագաղը կոչվել է «քարե թաբութ»: Դա պարտադիր է եղել հատկապես պատանքով, առանց փայտե դագաղի ննջեցյալների համար (ԴԱՆ, տ. 3, էջ 136, տ. 4, էջ 163): Համանման հակիրճ նկարագրություններ կան այլ աղբյուրներում⁸, ըթե ննջեցյալը երիտասարդ է եղել, քաբուրը ամբողջությամբ ծածկել են սալերով, իսկ մեծահասակ ննջեցյալի դեպքում՝ միայն զլուխն են պահել սալի տակ, մնացած մասը ծածկել են հողով: Բացի սալերից, դամբարանի խցի՝ քարե թաբութի պատերը շարվել է ոչ մեծ շափերի քարե շոր շարվածքով և ամրացվել է հողով: Ինչպես սալերով շարված խուցը, այնպես էլ մանր քարերից շարված պատերը գերեզմանափոսի հողե կտրվածքով պատերից ունեցել են մարդու ոտնատեղ կազմող հեռավորություն՝ ննջեցյալին դամբարան իջեցնելու, տեղավորելու և այն սալերով ծածկելու համար: Ուշագրավ է, որ թաղման այս սովորույթը սասունցիներով բնակեցված Թալինի և Աշտարակի մի շարք գյուղերում պահպանվել է մինչև XX դ. 40-ական թթ. (ԴԱՆ, տ. 14, էջ 19—21):

Թաղման այս սովորույթի մեջ զուգորդված է երկու ծիսակարգ՝ քրիստոնեական, երբ հանգուցյալին տեղավորել են հիմնահողային դամբարանում, դեմքով դեպի արևելք: Մյուս ձևը, որ ավելի հնավանդ է՝ դամբարանի կառուցվածքի մեջ քարարկղ շինելն է, որը սասունցիները վերապրուկային ձևով պահպանել են մինչև XX դ. 40-ական թթ., սովորույթ, որն սկիզբն է առել Հայաստանում դեռևս մ. թ. ա. IV—III հազարամյակում: Ըթե քարարկղային թաղման այս սովորույթը, ըստ հայտնի հնագիտական նյութերի, Հայաստանի և Անդրրկովկասի այլ շրջաններում պահպանվել է մինչև վաղ միջնադար, ապա սասունցիների մեջ՝ մինչև XX դ. 40-ական թթ.:

Ննջեցյալին թաղել են եկեղեցու մոտակայքում կամ բնակավայրից դուրս գտնվող ընդհանուր, համայնական գերեզմանոցի իրենց տոհմական ննջեցյալների շարքում, մերձավորության աստիճանին համապատասխան: Գերեզմանաթմբին իբրև տապանաքար սովորաբար դրել են տափակ, անտաշ ու տձև խոշոր քար: Իսկ համայնքում մեծ հարգանք վայելողի տապանաքարը սրբատաշ ու ձևավոր է եղել, գլխի կողմը՝ փորագրված խաչ, կողերին կամ վրան՝ ննջեցյալի արհեստն ու զբաղմունքը խորհրդանշող պատկերաքանդակներ:

Թաղման ծիսակարգում պահպանվել է մի այլ հնավանդ սովորույթ ևս, որն ուղեկցում էր հատկապես կտրիճի, համայնքի երեկու հուղարկավորմանը. հանգուցյալի ձին սև կտավով ծածկել և դագաղի ետևից տարել են մինչև եկեղեցու դուռը, ապա նրան եկեղեցի ընդունելուց հետո ձին դարձրել տուն (ԴԱՆ, տ. 14, էջ 21): Մի բանասացի հաղորդման համաձայն կիրառվել է նաև այլ տարբերակ. երբ դագաղն արդեն դուրս են հանել տնից, և սգո թափորն ուղղվել է դեպի գերեզմանատուն, նախապես այդ նպատակի համար հակառակ ձևով թամբած, սևով զարդարված, զենք ու զրահը վրան, առանց հեծյալի առաջ են բերել հանգուցյալի ձին և դագաղի ետևից տարել մինչև գերեզմանոց, առանձին դեպքում էլ՝ պահել են գերեզմանի մոտ մինչև թաղման կարգի ավարտը (ԴԱՆ, տ. 8, էջ 54): Այս պարագային Սասունում ժամանակին անդրադարձել է նաև Գ. Սրվանձտյանցը. «Այս կողմերու հայերը մեռելի վրա սաստիկ ողբ և կոտորում կ'ընեն. եթե անդրանիկ զավակ է մեռնողն, հուղարկավորության

⁸ Ե. Կարապետյան, Նշվ. աշխ., էջ 115: Վ. Պետոյան, Նշվ. աշխ., էջ 305:

ժամուն ձի մը կը զարդարեն, մեռնողին հագուստը ձիու վրա կը դնեն, անոր սուր, վահան, հրացան ձիու վրան կը կախեն. մեռնողին կամ ծնողաց հայ, քյուրդ և եգիպտացի բարեկամներ կը ժողվին կուգան. երբ գեղին կը մոտին՝ սկապայով (կարճ, թևավոր և մազոտ բաճկոն—Ռ. Ն.), մաշլաղով մը գլուխները կաբողեն և մեծ ձայնով կը բռնան... վայելքը: Հուղարկավորութեան հանդեսը կսկսի ամբողջ գյուղացովոց բազմութեամբ. և դագաղի առաջևն իբր քսան կանայք անուշ ձայնեղ, սևեր փաթթած գլուխները ողբեր կկարդան. քսանն ավելին ալ արք սև ապաները քաշած գլուխները սգավոր՝ ողբասաց կանանց ետևն կերթան... Թաղումէն մինչև յոթն օր այս հանդիսով կ'երթան գերեզման կուգան: Ով որ զննչեցյալ շատ կը սիրե, շատ կբռնա: Եվ եթե բարեկամները թաղման օրը զատ զատ գան, յուրաքանչյուրին զատ զատ կը դիմավորեն զարգարված ձիով, գույժ և ողբ ի բերան»⁹:

Որոշ տեղերում պահպանված է եղել հուղարկավորութեան հետ կապված հետևյալ սովորույթը. երբ տղամարդ ննչեցյալին տնից հեռացրել են, երեքշորս հոգի ձի նստել և դաղագի առաջն անցնելով, սկսել են դեպի գերեզմանատուն արշավել և երբեմն էլ՝ հրացանաձգութուն արել, մրցել, գնալ ու դառնալ դեպի դագաղը: Զիարշավն ավարտվել է դագաղը գերեզմանատուն հասցրնելիս¹⁰: Մի երևույթ, որը հավանորեն աղերսվում է Հայաստանում հնագույն ժամանակներում կատարվող թաղման ծիսական պարերի հետ:

Հուղարկավորութեան ժամանակ ննչեցյալի հետ երբեմն գերեզման են իջեցրել նրա ամենասիրած զենքը, որից նա շէր բաժանվել կենդանութեան օրոք, իսկ ձին և մյուս զենքերը կրկին հետ բերել տուն: Կին ննչեցյալի թաղման ժամանակ երբեմն հարսանեկան ընտիր հագուստն են իջեցրել գերեզման: Այդպես են արել 1968 թ. Թալինի շրջանի Զովասար գյուղում սասունցի 75-ամյա Ասլիկ Մկրտչյանի թաղման ժամանակ՝ գլխի տակ դնելով նրա կապոց արած հարսանեկան հագուստը (ԳԱՆ, տ. 14, էջ 26—27): Համանման նկարագրություն կա Սասունին հարակից Մշո Հարթ (Բուլանըխ) գավառի ծեսերի մեջ, գավառ, որի բնակիչների մի զգալի մասը եկել էր Սասունից: «Եթե մեռնողը անդրանիկ մեկն է կամ հարուստի միամոր զավակը, նորա ձին զարդարած ու զուգած, մեռնողի ընտիր-ընտիր հագուստներն ու զարդարանքները, զենքերն ու գլխու քոլոսը հարուստ փաթույթներով ձիու վրա դրած առջևից կբաշխին. եթե նշանած լինի և շամուսնացած մեռնի, պսակի զարդարանքներ ևս կավելացնեն, դհու ու զուռնա ևս տխուր եղանակով կմասնակցին և մոտիկ ազգականները պարելու ձևով շարժումներ կանեն»¹¹:

Ինչպես Հայաստանի այլ պատմաազգագրական շրջաններում, այնպես էլ Սասունը ներառնող Աղձնիքին վերաբերող թաղման ծեսի նկարագրություններում աչքի է զարնում մի ուշագրավ հանգամանք ևս՝ կանայք ակտիվ մասնակցություն են ցուցաբերել տղամարդու թաղման ու մեռելոցի գրեթե բոլոր արարողություններին, բացի բուն հուղարկավորությունից: Կանանց խումբը լաց ու աղմուկով հետևել է սգո թափորին, բայց ոչ մի կին գերեզմանատուն գնալու և թաղմանը մասնակցելու իրավունք չի ունեցել. վերադարձել են հուղարկավորութեան կես ճանապարհից: Շատ տեղերում կանայք սգո թափորի կազմում գնացել են մինչև գերեզմանոցի մուտքի մոտ գտնվող հանգստանք փար, ապա

⁹ Գ. Մրվանձտյանց, Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 162—163:

¹⁰ Վ. Պետոյան, Նշվ. աշխ., էջ 304:

¹¹ Բենե, Բուլանըխ կամ Հարթ գավառ, Ազգագրական հանդես, գ. Ե, Թիֆլիս, 1899, 176: ՀմՄտ. որոշ պարագաներում թաղումը հարսանիքի փոխարինելու մորթվանների սովորույթի հետ (Ս. С. Кавтаскин. Пережитки обрядов причитаний и песен связанных с древним мордовским обычаем имитации свадьбы при умершей девушке.—Фольклор и этнография, Л., 1974, с. 269—270).

նչեցյալին վերջին հրածեշտը տալուց հետո հետ են դարձել, այլ տեղերում՝ հասել են մինչև եկեղեցի և դազադը եկեղեցի մտցնելուց հետո վերադարձել են տուն: Կանայք հանգուցյալի գերեզմանին այցելել, խունկ են ծխել, ողբացել թաղումից մի օր հետո՝ հողվեբֆին կամ էկնահողին:

Հուդարկավորման նկարագրված սովորույթները զուգահեռներ ունեն Կովկասի, Միջին Ասիայի, Մերձվոլգայի, Սիբիրի և այլ ժողովուրդների կենցաղում¹²:

Ընդարձակ համեմատական նյութի հիմամբ այս սովորույթն ուսումնասիրել է Բ. Ա. Կալուեր՝ օսերի մեջ հայտնի «ձիու նվիրաբերման» ծեսի օրինակով: Նա հանգել է այն հետևություն, որ դա թաղման ծեսի հինավուրց այն սովորույթի արձագանքն է, երբ հանգուցյալի հետ թաղել են նրա բոլոր անձնական իրերը, նաև կնոջն ու ձին¹³: Իսկապես, ազգագրական նյութերը վկայում են, որ տակավին ոչ վաղ անցյալում որոշ ժողովուրդներ սովորույթուն են ունեցել տիրոջ հետ թաղելու նաև նրա ձին ու ողջ հանդերձանքը¹⁴:

Մասունի և հարակից որոշ շրջանների հայերի մեջ վկայված է առանձին դեպքերում հանգուցյալի զենքն ու զարդը, հագուստը և այլ առարկաներ նրա հետ գերեզման իջեցնելը, մի վերապրուկ, որն ըստ երևույթին պահպանվել է վաղնջագույն շրջանից: Այս երևույթը քաջ հայտնի է պեղածո նյութերով, սովորույթ, որի հինավարցույթունը հավաստվում է նաև հայոց արքա Արտաշես Ա-ի թաղման վերաբերյալ Մովսես Խորենացու բերած ավանդությամբ. «Եւ (Արիստոնը) գրէ. եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք. և որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիվ դիոյն, քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոս: Դագաղքն էին ասէ, ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ. և պատմուճանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկով առաջի եղեալ. և զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն աղգականացն, և առ այսոքիւք պաշտօնեիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն զունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, զկնի կուսանք ձայնարկուք սևազգեստք և աշխարող կանայք, և զհետ՝ բազմութիւն ռամկին»¹⁵: Քիչ հետո կարդում ենք. «Եթե ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածքն լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտավազդ՝ ասելով ցհայրն. «Մինչ դու զնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես ւերակացս ո՛ւմ թագաւորեմ»¹⁶:

Մեջբերումը լավագույնս վկայում է հայոց էթնիկ մշակույթի մեջ այդ ծեսի վերապրուկները Հայաստանի առանձին շրջաններում, նույնիսկ քրիստոնեության ընդունումից հետո: Ինքնին հասկանալի է, սակայն, որ բովանդակությամբ նույնական լինելով, մինչև XX դ. սկզբները հասած ծեսը կրել է արտաքին կառուցվածքային զգալի փոփոխություններ:

¹² Տե՛ս «Религиозные верования народов СССР». — Сборник этнографических материалов, т. 1, М.-Л., 1931, с. 17, 74, 123; Ш. Д. Инал-Ипа. Абхазы. Историко-этнографические очерки. Сухуми. 1960, с. 354; Б. А. Калоев. Обряд посвящения коня у осетин. — VII МКАЭН, т. 8, 1964, с. 33—37; М. Аюезов. Путь Абая, т. 1, Алма-Ата, 1960, с. 205; X. Есбергенов. К вопросу об изживании религиозных предании и обрядов у каракалпаков, автореф. канд. дис. М., 1963, с. 14; П. В. Денисов. Религиозные верования Чувашин, Чебоксары, 1959, с. 118:

¹³ Տե՛ս Բ. Ա. Կալուեր, Обряд посвящения коня у осетин, էջ 36:

¹⁴ Տե՛ս «Религиозные верования народов СССР» հ. 1, էջ 17, 43, 74, 123, 146 և այլն:

¹⁵ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ, Մ. Արեղեան և Ս. Հարութիւնեան), Թփղիս, 1913, էջ 190—191:

¹⁶ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, էջ 191—192:

Այսպես, դժվար չէ նկատել, որ գերեզմանոց տանող ճանապարհի կեսից ձիու և կանանց հետդարձը, կամ՝ վերջիններիս ընդհանրապես տղամարդկանց թաղմանը մասնակցելու արգելքը, շեղում է հնամենի ծեսից՝ հանուն նրանց ողջ մնալու, տիրոջ կամ ամուսնու մահից հետո կյանքը շարունակելու: Ժողովրդական մտածողությունն այստեղ մեկ այլ ելք է գտել: Ձիու մասնակցությունը տիրոջ հուղարկավորմանը պիտի խորհրդանշեր այդ կենդանու նվիրվածությունն ու հանդերձյալ կյանքում տիրոջը ծառայելու հանգամանքը: Հին Նախիջևանի գավառի Քյուլ-Թափա գյուղում պեղումներ կատարելիս Ե. Լալայանը մ. թ. ա. III հազ. վերաբերող մի գերեզմանի մեջ գտել է քարե՛ց շինած թամբած ձի՛ 4—5 սմ երկարությամբ և 3 սմ բարձրությամբ: Պարզ է, որ ննջեցյալի հետ ձին թաղելու սովորությանը այստեղ փոխարինել է նրա մոդելը թաղելու սովորությունը¹⁷:

Ինչ վերաբերում է հանգուցյալի այրուն, ապա որպես նրան փոխարինող մաս հանդես է գալիս նրա հյուսկեն ծամը, որ կտրվում էր ամուսնու մահվան դեպքում¹⁸, դրվում նրա կրծքին ու այդպես էլ թաղվում: Եթե ննջեցյալը երիտասարդ է եղել, կինը, մայրը, քույրը կամ աղջիկը՝ որպես սիրո նշան, իրենց խոր վիշտը փարատելու միտումով ամեն մեկն իր մազերից մեկ կամ երկու հյուս կտրել և դրել են դագաղի մեջ և կամ պահել են տանը՝ իրենց հագուստների սնդուկում, երբեմն էլ կախել են հանգուցյալի գերեզմանին մոտիկ մի ծառից (ԴԱՆ, տ. 4, էջ 47, տ. 14, էջ 19):

Ըստ երևույթին, այս հարցում պակաս կարևոր չէր նաև քրիստոնեական կրոնի ու եկեղեցու միջամտությունը, որի կանոնների համաձայն արգելվում էր հանգուցյալի հետ որևէ իր թաղելու հեթանոսական սովորույթը: «Ձիու նվիրաբերման» օսական սովորույթի ծագումնաբանական ակունքները Բ. Ա. Կալուեր հասցնում է սկյութա-սարմատական և ալանական էթնոմշակութային աշխարհը, իսկ կենցաղավարման այդքան լայն աշխարհագրական շրջանակները (Կովկաս, Միջին Ասիա, Մերձբալթիկա, Մերձվոլգա, Սիրիա և այլն) բացատրում է այդ նույն մշակութային աշխարհի ազդեցությունը¹⁹:

Թեև մեզ հասած ազգագրական նյութերում ձիու թաղումը խորհրդանշող ծեսը, ինչպես ասվեց, պահպանվել է սոսկ Սասունում և հարակից որոշ շրջաններում, այնուամենայնիվ, հնագիտական նյութերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում և հարևան երկրներում ձին հայտնի է սկյութա-սարմատական էթնո-բնատարածքային միավորումների ասպարեզ գալուց շատ ավելի վաղ, մ.թ.ա. V հազ.²⁰: Ինչ վերաբերում է ձիու թաղման բուն ծեսին, ապա այն քաջ հայտնի է մ.թ.ա. XVIII դ.՝ Շամշադինի, իսկ ավելի ուշ՝ մ.թ.ա. XIV դ.՝ Լճաշենի և այլ հուշարձանների պեղումներից²¹:

Սասունցիների թաղման ծեսը, ինչպես արդեն նշվել է, ուղեկցվում էր բազմաթիվ սնահավատ գործողություններով: Այսպես, գերեզմանը փորելուց հետո, մինչև ննջեցյալին բերելը, բահն ու բրիչը խաշաձև դնում էին գլխի

¹⁷ ՏՆ՝ Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 190—191:

¹⁸ Օսերը նույնիսկ կնոջ կտրված հյուսով խփում էին ձիուն և, խոսքն ուղղելով ննջեցյալին, ասում. «Ահա քեզ մտրակ, քեզ չինեն երկուսն էլ» (այսինքն ձին և կինը): ՏՆ՝ Ե. Ա. Կալուև, Обряд посвящения коня, էջ 44:

¹⁹ Ե. Ա. Կալուև, Կշվ. աշխ., էջ 37: նույնի՝ Осетины. Историко-этнографическое исследование, М., 1971, էջ 228:

²⁰ ՏՆ՝ Ս. Կ. Межлумян, Папеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении, Ер., 1924, էջ 88—135:

²¹ Ս. Ա. Есаян, Древняя культура племен Северо-Восточной Армении. Ереван, 1976, էջ 171, 172, 175:

կողմը, որպեսզի սատանաները շմտնեին գերեզմանափոսը: Հավատում էին, որ ընտանիքի անդամներից որևէ մեկի մահից հետո կարող էր մահվան նոր դեպք լինել: Նման դժբախտությունը կանխելու նպատակով ննջեցյալին տնից դուրս հանելիս շուռ էին տալիս այն թախտը, որի վրա դրվում էր դին և կամ՝ տվյալ ընտանիքում մի քանի օր տունը չէին ավլում և հաց չէին թխում: Նույն միտումով տան բոլոր անդամների հասակի երկարությամբ թելեր էին շափում և դնում ննջեցյալի պատանքի մեջ, որոնք փոխարինելու էին ողջերին: Ոմանք էլ՝ եթե թաղումից հետո ընտանիքում որևէ մեկը հիվանդանում էր, նրա շապիկը թափ էին տալիս ննջեցյալի գերեզմանի վրա²² (ԴԱՆ, տ. 14, էջ 22—23): Կամ նոր թաղված ննջեցյալի գերեզմանի վրա հիվանդը լվացվում և ապա կոտրում էր կավե սափորը, ասելով. «առ հիվանդութունդ, տուր առողջութունս» և ապա, շարքերին մոլորեցնելու նպատակով, այլ ճանապարհով անխոս վերադառնում էր: Եթե մի տան մեջ հիվանդ կամ նորածին էր լինում, ննջեցյալին այդ փողոցով տանելիս, դուրս էին հանում մանկանը կամ հիվանդին՝ «չկոխվելու» միտումով: Մեռչալիս հիվանդն ըստ սովորույթի պարտավոր էր կոխի պատճառ հանդիսացողի գերեզմանաքարին հպվել և ասել. «Առ ծանրութունդ, տուր թեթևութունս» (ԴԱՆ, տ. 14, էջ 22—23): Հավատացել են նաև, որ դժբախտություն կարող է պատահել, եթե թաղման թափորից որևէ մեկը և հատկապես քահանան հետ նայեր: Այս ամենի հետ մեկտեղ սասունցիները կարծել են, որ մեռած և արդեն թաղված մահմեդականների կամ վերջիններիս հավասարեցված վաշխառուների հոգիներն ընդունակ են դուրս գալու գերեզմանից և ընդունելով սև շան, կատվի, էջի կամ այծի կամ էլ՝ մերկ մարդու կերպարանք, զանազան վնասներ պատճառել մարդկանց: Դրանք կոչվել են խոբըլախ կամ գոռնափշտ (ԴԱՆ, տ. 11, էջ 33): Համաձայն ժողովրդական հավատալիքների, մարդու հոգին, որ դուրս է գալիս վերջին շունչը փչելուց հետո, շարունակում է գոյութունը մարմնից անկախ և կարող է հաճախ այցելել հարազատներին ու ծանոթներին: Մարմնից բաժանված այդ, այսպես կոչված հոգիներից, կենդանի մարդկանց երկյուղն այնքան մեծ է եղել, որ երբ ննջեցյալին տնից դուրս են բերել, վերջինիս, ինչպես թշնամու ետևից, կավե ամաններ են շարտել, հետևյալ խոսքերով. «Երթալդ լինի գալդ չլինի»²³ (ԴԱՆ, տ. 14, էջ 13): Տան մեջ ենթադրվող շարժումներն, խաթաբալին ննջեցյալի հետ գերեզման ուղարկելու նպատակով, դրացիները ննջեցյալի հետևից գաղտնի, առանց մեռելի թափորին նայելու, դուրս են թափել տան մեջ եղած աղբը, նաև գուռերի ամանների ջրերը՝ «մեզմե աղեկներ» կոչված շարքերը մեռելը մեջը շողացնելու միտումով:

²² Ննջեցյալին գերեզմանոց տանելու ժամանակ Սասունում հիվանդատեր պառավը սգո թափորի ետևից հիվանդի շորերը թափ տալով և մեռելին խոսքն ուղղելով՝ մրմնջում էր հետևյալ խոսքերը.

«Թիվ, թիվ, թիվ, թիվ,
 Մեռել մեռելոցին.
 Ետ երթաս, առաջ չիգաս
 Տուշմընիս դուռը շրգնաս:
 Ուր կերթաս, ուր տ'երթաս,
 Մեր տան երդիկից հեճանաս,
 Չար, խատեն ու զրպեն
 Առնիս երթաս մըր դինն:
 Չարը շարով շորանա,
 Մըր աշխարհ կանչնա,
 Ցիստոս, Քրիստոս, Մարիամ կույս,
 Իմդադ կանգնիս իմ որդու...»:

(Տե՛ս «Արձագանք», 1895, № 116):

²³ Նույնպես էին վարվում, երբ թշնամի էր տնից գնում, իսկ երբ ցանկալի հյուրն էր մեկնում, ետևից ջուր էին ցանում (տե՛ս Գ. Մովսեսյանց, Մանանա, Երկեր, հ. 1, էջ 158—159):

մով: ննչեցյալի շարժվելը կանխելու և շար ազդեցութիւնից հեռու պահելու միտումով է, որ պատանքելու ժամանակ շին մոռացել կատարելու երկու ոտքի բութ մատները իրար կապելու սնահավատ գործողութիւնը:

Ողջերը պետք է սիրաշահեին հանգուցյալին, որպեսզի այս կամ այն արարքից դժգոհ մնացած հոգին որևէ վնաս չպատճառեր ողջերին: Այս գաղափարի արտահայտման ամենատարածված եղանակը հոգուն «կերակրելու» սովորույթն էր, որ սասունցիների մեջ կիրառվել է մահվանից անմիջապես հետո, երբ ննչեցյալի կրծքին նշխարք են դրել, իսկ հարազատներին երազում նոր ննչեցյալի հաճախ ներկայանալն էլ կանխելու համար թոնրի կրակի մեջ են գցել մի գունդ խմոր և այրել՝ որպես նրա բաժին կերակուրը: Կամ էլ՝ դեռ լույսը չբացված տնետուն և անցորդներին անխոս հաց են բաժանել: Ըստ սովորույթի, մեռնելու օրից մինչև տարին լրանալը ննչեցյալի տերն օրական մեկ աման կերակուր և մի քանի հաց «խեր անելու» նպատակով բաժանել է մի կամ երկու աղբատ ընտանիքի: (ԴԱՆ, տ. 11, էջ 54): Հոգիներին սիրաշահելու առավել ընդունված ձևը հոգեհացի կարգը կատարելն էր՝ յոթնօրեքի, քառասունքի և տարելիցի հարկ տալը: (ԴԱՆ, տ. 2, էջ 219): Հոգեհացի տարբեր արարողութիւնների և «խերի» համար աղբատներին հաց ու կերակուր բաժանելու գաղափարը, ըստ ժողովրդական պատկերացման, այն է եղել, որ այդ կերակուրի զորութիւնն իբր թե անցել է ոչ թե անմիջական ուտողներին, այլ ննչեցյալների հոգիներին: Ահա թե ինչու, նույնիսկ նյութապես անկարող ընտանիքները ջանացել են ետ շնալ «հոգիների կերակրման» այդ սովորույթից հանուն հանդերձյալ աշխարհում իրենց ննչեցյալների հոգու հանգստութեան, մի սովորույթ, որն ավանդվել է հեթանոսական ժամանակաշրջանից: Միաժամանակ, ըստ այդ նույն ժողովրդական հավատալիքների, եթե պատշաճ ծիսակատարութիւններով շուղեկցվիր հուղարկավորութիւնը, ապա ննչեցյալները «խորթլախի» կերպարանքով մշտապես վախ ու հալածանք կպատճառեին մերձավորներին: Հեթանոսական շրջանի այդ սովորույթը ժամանակին հարմարեցնելով իր շահերին, քրիստոնեական եկեղեցին ննչեցյալի ընտանիքից պահանջել է հոգեբաժին նաև իր օգտին (ննչեցյալի հազուատները, անասուն, հացահատիկ, երբեմն նաև դրամ): Հոգեբաժնի չափը որոշել են թեմականքի ներկայացուցիչը և երեցփոխը: Սակավ է պատահել, որ ննչեցյալի տերը հակառակեր նրանց և չհատուցեր պահանջվածը, այլապես երկյուղել են, որ ննչեցյալն անեծքներ կթափի ողջերի գլխին, ընդմիջտ խռով կմնա և իր հետ գերեզման կտանի տան հաջողութիւնն ու երջանկութիւնը (ԴԱՆ, տ. 14, էջ 1—2): Նման պարագայում ազգակցական և համայնքային օգնութիւնը պարտադիր է եղել: Առհասարակ, ոչ միայն սասունցիները, այլև ողջ աղձնիքահայերը «եթե սուգ մի, միասին կսգային, նույնպես ալ հարսանիք մի կամ երեխայի մկրտութեան հանդես մի, միասին կվայելեին»²⁴:

Դժբախտութեան օրը համայնքը դադարեցնում էր բոլոր աշխատանքները՝ ննչեցյալի գերեզմանափոսը փորելու և այլ բնույթի օգնութիւն ցույց տալու պատրաստակամութեամբ: Սասունում հուղարկավորութեանը զուգընթաց կազմակերպվող սգո ձիարշավը և հրացանաձգութիւնը համայնքին ազդարարել է մահվան բոթը: Համայնքում մեծ հեղինակութիւն վայելող անձի մահվան դեպքում տան մեծի համաձայնութիւնը վերցնելուց հետո միայն հարսանիք են արել: Հանգուցյալի ազգականները յոթ օր սուգ են պահել, տարեց հարազատները գլուխները ծածկել են սև փուշիներով, տղամարդիկ գդակները շուռ են տվել և թարս դրել, վերնազգեստները հագել են «շրջոնք» տված (շրջված): Կամ էլ՝ թափորի ետևից գնացող ամեն մի տղամարդ գլուխը ծածկել է ննչեց-

²⁴ Տ. Մկուռն, Ամիտայի արձագանքները, հ. 1, 1950, էջ 1:

յալի հագուստներից մեկով (բացառությամբ ներքնազգեստների): Իսկ տան մեջ լավկան կանայք, աղջիկները, երիտասարդ հարսները նույնպես գլուխները ծածկել են ննչեցյալի այս կամ այն զգեստով կամ սև քողով: Երիտասարդ հարազատ աղջիկները և հարսները կտրել ու ննչեցյալի գերեզմանին են դրել և կամ իբրև հիշատակ պահել մեկ կամ երկու հյուսք, իսկ տղամարդիկ երկար ժամանակ չեն սափրվել: Սուգ պահող կանայք երբեմն տարիներով ուրախության չեն մասնակցել և սևազգեստ են մնացել: Ազգակից ընտանիքներն այդ տարի նվագով հարսանիք չեն արել և «դրմուգ» կոչվող տարեմուտի հաց չեն թխել (ԴԱՆ, տ. 12, էջ 17): Մեռելատերը յոթ օր հաց չի թխել և կերակուր չի եփել: Հարկ (հոգեհաց) տալը և յոթնօրեքի ճաշկերույթի կազմակերպումը ազգատոհմի պարտականությունն է եղել՝ սզվորներին տարել են հաց, յուղ, այլ աննդամթերքներ, մսացու տավար, ոչխար և այլն: Սասունի մի շարք գյուղերում ազգի և համայնքի կանայք հողվերքի կամ էկնահողի արարողությանը մասնակցել են պատրաստի ուտելիքներով ու կերակուրով և որոշ դեպքերում՝ նաև ամաններով ու գդալներով (ԴԱՆ, տ. 6, էջ 65—67, տ. 14, էջ 10—11): Աղձնիքի մեկ այլ գավառի՝ Բաղեջի շրջակա գյուղերում, եթե ննչեցյալը առավոտն է թաղված եղել, նույն օրը ճաշին, իսկ եթե երեկոյան՝ հաջորդ օրվա կեսօրին համայնքի յուրաքանչյուր ընտանիք կանանց միջոցով մեկական աման կերակուր է ուղարկել ննչեցյալի տուն և սզվորներին ստիպել ճաշելու՝ ննչեցյալի հարազատներին ազատելով անհարկի ծախսերից (ԴԱՆ, տ. 2, էջ 210): Սգի ծանրության կամ թեթևության համեմատ ազգականուհիները յոթնօրեքին և կամ տարին լրանալիս գնացել են սզվորի տուն՝ սգից հանելու: Հետները տարել են հաց, յուղ, միրգ, շաքար, զգեստացու, նաև մանուշակագույն կամ կարմիր գլխաշոր՝ հանգուցյալի մոր կամ կնոջ սև գլխաշորին փոխարինելու համար, որից հետո լվացել են սզվորների հագուստները, տարել են բաղնիք ու ուխտավայր: Իսկ տղամարդկանց սգից հանել են յոթնօրեքին գերեզմանոցից վերադառնալուց հետո: Հասակավոր մի կին և մի տղամարդ իջեցրել են նրանց գլխի սև քողերը կամ գլխի վրա շրջած վերանազգեստները, ուղղել գդակները: Սգից հանելիս ազգականների պարտականությունների մեջ էր մտնում նաև սզվորին տնից տուն հրավիրելը և զգեստացու կամ գլխաշոր նվիրելը: Ազգականները նյութական օգնության են հասել նաև մեծ պահքի վերջին շաբաթի ուրբաթ օրը կայանալիք մեռելոցին: Ննչեցյալի ազգականները մեծ պահքի ժամանակ «պորտե-պորտ» նախնիների հիշատակը հարգելու կամ շաբաթ օրերին կատարել են պատարագ՝ գերեզմաններն օրհնել տալով և ապա տներից բերած բարիքները ներկաներին բաժանելով: Նույն օրը եփել են կանեփից հարիսա, որը բաժանել են նախ աղքատներին, ապա՝ ազգականներին և հարևաններին, իսկ ոմանք էլ գիշերը հաց եփելով՝ առավոտյան կանուխ բաժանել են անցորդներին, հարևաններին (ԴԱՆ, տ. 12, էջ 75—77): Հիշատակված այս ծեսերի հիմքում, անշուշտ, ընկած են անիմիստական և մոգական պատկերացումները, նաև ննչեցյալների և նախնիների պաշտամունքը:

Այսպիսով, ընտանեկան ծիսական համակարգում ուրույն տեղ ունի նաև մահվան և հուղարկավորության ծեսը: Այն աչքի է ընկնում հինավուրց սովորույթների խիստ պահպանողականությամբ և բովանդակում է ժողովրդի կենսակերպի ու պատկերացումների առավել հատկանշական գծեր, ուստի թաղման ծիսակարգի գիտական մեկնաբանումը կարող է նպաստել մշակութային այլազան շերտերի բացահայտմանը:

Սասունցիների, ինչպես նաև Աղձնիքի մյուս գավառների բնակչության թաղման ծեսերին վերաբերող նյութերը հնարավորություն են ընձեռում որոշակիորեն առանձնացնելու մահամերձի (հոգևարք ապրողի) նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի, մահը կանխագուշակելու ուսցիտնալ ու իռացիտնալ

հնարների, հանգուցյալի մարմնի հետ վարվելու (լողացնելու, պատանքելու), դիակը, հուղարկավորելու, հոգեհացի կարգը կատարելու, ինչպես նաև վախճանը ողբալու և սգալու բազմատարր արարողությունների ու սովորույթների հետևողական շղթան:

Ուրեմն, XIX դ. վերջին և XX դ. սկզբին Սասունում և գրեթե ամբողջ Աղձնիքում հուղարկավորության ծեսերը պահպանել էին դարերի խորքից եկող սովորույթներ, որոնք մեծ մասամբ գալիս են նախնադարից: Այդ սովորույթների պահպանողականության հետևանքով էր, որ թաղման ծեսերը համեմատաբար ավելի քիչ էին ենթարկվել փոփոխությունների: Միայն Սովետական Հայաստան տեղափոխվելուց հետո էր, որ սասունցիների բեկորները թաղման սովորույթներում մտցրին որոշ փոփոխություններ: Ավելի ստույգ՝ նրանք յուրացրին արևելահայկական սովորույթների զգալի մասը և վերացրին մի շարք երևույթներ, ինչպիսիներից էին գերեզմանափոսում քարարկղ պատրաստելը, ձին հուղարկավորման ծեսերի մեջ մտցնելը, ձիարշավ կազմակերպելը, զենքը ննջեցյալի հետ թաղելը, տղամարդ ննջեցյալի թաղմանը կանանց մասնակցության արգելքը և այլն:

Հուղարկավորության հին ծիսակատարությունները Սասունում ընդհանուր գծերով հանդերձ կազմել են հայկական նույնօրինակ ծիսակարգի մի, թերևս, առավել պահպանողական տարբերակը:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած դաշտային և գրավոր նյութերը մեկ անգամ ևս հաստատում են, որ Աղձնիքը և նրա մասը կազմող Սասունը եղել է ազգագրական հարուստ նյութերով օժտված շրջան: Եվ քանի որ այժմ այս շրջանի բնակչությունը ցաք ու ցրիվ է եղել եղեռնի և արտագաղթի պատճառով, խիստ կարևոր նշանակություն է ստանում նրա բազմակողմանի հետազոտումը:

Р. А. НАГАПЕТЯН.— **Некоторые обычаи похоронно-поминального обряда (По этнографическим материалам сасунцев)**—В статье на основании полевых этнографических материалов, собранных автором среди выходцев из Сасуна, выявляются и характеризуются представления сасунцев относительно судьбы и смерти, культ умерших и культ предков; даны описания обычаев и обрядов погребения, ритуалов, связанных с похоронами форм и продолжительности траура и др. Интерпретация сасунского материала, засвидетельствованного для периода второй половины XIX—начала XX века, данных по другим историко-культурным районам Армении, а также предшествовавших исторических эпох позволили не только выявить некоторые общие и специфические черты во всем комплексе похоронно-поминального обряда, но и определить наиболее архаичные слои и элементы в нем. Так, выявляется своеобразие мужских и женских захоронений, ритуал частичного или полного погребения покойников в каменных ящиках, аналогии с которыми известны по археологическим материалам древнейшего периода (IV—III тыс. до н. э.). Сравнительно-сопоставительный анализ этих материалов позволил раскрыть некоторые особенности культурно-бытового развития населения Сасуна, его своеобразие среди других локальных групп армянского этноса.